Հանրամատչելի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Տնօրինության
2019թ. _____ «_____» N _____ որոշմամբ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահ
_____ Ի.Տելեգին

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ.....7

ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ 8

ԳԼՈՒԽ 5. ԱԳԱՌԽ ԿՈՂՄԻՑ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 10

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ 11

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ 13

ԳԼՈՒԽ 8. ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ 13

ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 14

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ Բանկ) Բանկի հաճախորդներին միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) հանդիսանում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներքին իրավական ակտ, որով սահմանվում են այն կանոնները, որոնց համապատասխան Բանկը Բրոքերային սպասարկման պայմանագիր ստորագրած Հաճախորդներին մատուցում է բրոքերային ծառայություններ արժեթղթերի շուկայում:

2. Սույն Ընթացակարգին համապատասխան, Բանկը Հաճախորդներին մատուցում է բրոքերային ծառայություններ արժեթղթերով Հայաստանի Հանրապետության (ՀՀ) սահմաններից դուրս ինչպես օտարերկրյա կոնտրագենտների հեռահար առևտրային համակարգերի միջոցով՝ անմիջապես Հաճախորդի կողմից գործարքների կնքման ճանապարհով, այնպես էլ արտաբորսայական գործարքներ Բանկի Արտասահմանյան բրոքերների միջոցով՝ հայտեր ներկայացնելու ճանապարհով, որոնց հանրային առաջարկը (վաճառքը) և/կամ առևտուրը թույլատրված է արտերկրում և որոնք ներառված են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված արտասահմանյան երկրների ցանկում, կամ որոնց առևտուրը թույլատրված է արժեթղթերի որևէ կարգավորվող շուկայում՝ ներառված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ՀՀ սահմաններից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում:

3. Բանկը բանկային գործունեության իրականացման լիցենզիայի հիման վրա համատեղում է բրոքերային ծառայությունների մատուցումն Օրենքով նախատեսված այլ տեսակի հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունների մատուցման և բանկային գործառնությունների իրականացման հետ:

4. Սույն Ընթացակարգը հանդիսանում է Արտասահմանյան բրոքերի կողմից սպասարկվող առևտրային համակարգի դիտման և գործարք կատարելու հասանելիություն տրամադրելու վերաբերյալ համաձայնագրի անբաժանելի մասը և միայն սույն Ընթացակարգի հետ միասին Համաձայնագիրը հանդիսանում է վավերական փաստաթուղթ՝ լիովին արտացոլող կողմերի համաձայնությունը, կամքը, պարունակող կիրառելի և կատարման ենթակա դրույթները:

5. Սույն Ընթացակարգը մշակվել է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Արտասահմանյան բրոքերների ֆինանսական շուկաներում սպասարկման ընթացակարգի, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների, տվյալ բնագավառը կարգավորող այլ նորմատիվ ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

6. Սույն Ընթացակարգի պայմանական սեփականատերը և սույն Ընթացակարգով սահմանված բիզնես գործընթացի իրականացման պատասխանատուն հանդիսանում է Բանկի Գանձապետարանի Արժեթղթերի հետ գործարքների բաժինը:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

7. Սույն Ընթացակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները և հապավումները.

1) **«Բանկ»՝** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ,

2) **«Բրոքերային ծառայություններ»՝** արժեթղթերով գործարքների կնքում սեփական կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին,

3) **«Բրոքերային հաշիվ»՝** Բրոքերային ծառայությունների սպասարկման համար նախատեսված հատուկ հաշիվ, որտեղ Հաճախորդն ապահովում է բավարար միջոցների առկայություն գործարքների կնքման և բրոքերային միջնորդավճարների գանձման համար,

4) **«Արժեթղթերի արտաբորսայական շուկա»՝** բորսայից դուրս արժեթղթերի երկրորդային շուկա,

5) **«Արժեթղթերի հետ գործարքների աջակցման և ուղեկցման խումբ» (այսուհետ՝ ԱԳԱՈՒԽ)՝** Բանկի կառուցվածքային ստորաբաժանում, որն ապահովում է Հաճախորդների գործարքների կատարումը, ուղեկցումը, հաշվապահական ձևակերպումը և հաշվառումը,

6) **«Միասնական բրոքերային հաշիվ»՝** անվանական հաշիվ Արտասահմանյան բրոքերի ներքին հաշվառման ներքո, որտեղ հաշվառվում են Հաճախորդի դրամական միջոցները, արժեթղթերը և Հաճախորդի գործառնությունների վերաբերյալ հաշվարկները Հաճախորդի և երրորդ անձանց հետ: Հաճախորդի Միասնական բրոքերային հաշվի ներքո բացվում է Հաճախորդի Ենթահաշիվ,

7) **«Արտասահմանյան բրոքեր»՝** անձ, որի ներգրավմամբ և միջնորդային ծառայությունների օգնությամբ Բանկը ծառայություններ է մատուցում Հաճախորդին,

8) **«Օրենք»՝** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք,

9) **«Հայտ»՝** արժեթղթերով գործարքի կնքման Հաճախորդի հանձնարարություն, ինչպես նաև ներդրումային ծառայություն մատուցող անձին տրվող կարգադրություն, հանձնարարություն, պատվեր կամ առաջարկություն,

10) **«Արտասահմանյան արժեթղթեր»՝** արտասահմանյան երկրների, միջազգային կազմակերպության, արտերկրում գրանցված իրավաբանական անձի կամ ներդրումային հիմնադրամի, կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող գույքային համալիրի կողմից թողարկված արժեթղթեր, որոնց գրանցամատյանը չի վարվում և չի վարվել Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից (ՀԿԴ): Ընդ որում, ՀԿԴ կողմից Արտասահմանյան արժեթղթերի պահառության սպասարկման սկզբունքները, սահմանված վերջինիս կանոններով, նույնպես կիրառվում են ՀՀ անունից (կողմից) կամ ՀՀ-ում գրանցված թողարկողի կողմից արտերկրում թողարկված և/կամ արտարժույթով տեղաբաշխված այն արժեթղթերի դեպքում, որոնց պահառության ծառայության սպասարկման ընթացքում ՀԿԴ հանդես է գալիս որպես Արտասահմանյան դեպոզիտարիայի ենթապահառու,

11) **«Հաճախորդ»՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Բանկն ունի բրոքերային ծառայությունների մատուցման գործող Պայմանագրի,

12) **«Հեռախոսային հավելված»՝** Արտասահմանյան բրոքերի հեռախոսային հավելված բորսայական հարթակներում ներդրումներ կատարելու համար,

13) **«ԱԿՇ»՝** արժեթղթերի կազմակերպված շուկաներ կամ Առևտրային համակարգեր (ԱՀ), որտեղ գործարքների կնքումը կատարվում է Առևտրային համակարգերի Կանոններում ամրագրված ճշգրիտ սահմանված ընթացակարգերով և Արտասահմանյան բրոքերի երկրի օրենսդրությանը համապատասխան, իսկ գործարքներով պարտավորությունների կատարումը երաշխավորված է գործարքների մասնակիցներից անկախ փոխանցման և վճարման համակարգերով,

14) **«Պատասխանատու աշխատակից»՝** Արժեթղթերի հետ գործարքների բաժնի աշխատակից, ով ունի վկայագիր և/կամ ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան այլ պարտադիր որակավորման փաստաթուղթ, Բանկի կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին, նրա հայտի հիման վրա արժեթղթերի առուվաճառքի գործարքներ կնքելու և իրականացնելու համար,

15) **«Առևտրային համակարգի կանոններ (ԱՀ կանոններ)»՝** ցանկացած կանոններ, ընթացակարգեր, ուղեցույցներ, նորմատիվ փաստաթղթեր կամ պահանջներ, որոնք շուկայում գործարքներ կատարելիս պարտադիր են կատարման և սահմանված են առևտրային համակարգով (առևտրի կազմակերպչի) կամ նրա լիազորված ներկայացուցիչների՝ տեխնիկական կենտրոնի, քլիրինգային և հաշվարկային կազմակերպությունների կողմից,

16) **«QUIK ԾԱ»՝** ծրագրային միջոցների համալիր, նախատեսված Հաճախորդի և Բրոքերի միջև տարբեր ծրագրային հարթակներում QUIK տերմինալի օգտագործմամբ տեղեկատվական փոխհամագործակցության ապահովման համար: QUIK ԾԱ տեղադրման և օգտագործման ընթացակարգը, ինչպես նաև Հաճախորդի կողմից էլեկտրոնային ստորագրության բանալիների ձևավորման ընթացակարգը, ներկայացվում են Արտասահմանյան բրոքերի կայքում, ինչպես նաև մշակողի տեխնիկական փաստաթղթերում («ԱՐՔԱ Տեքնոլոջիզ» ՍՊ ընկերության), ներկայացված նրա պաշտոնական կայքում. http://www.arqatech.com/,

17) **«Կարգավորվող շուկա»՝** հասարակությանն ուղղակի կամ անուղղակի ձևով հասանելի կազմակերպչական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որի միջոցով կանոնավոր կարգով կազմակերպվում, տրամադրվում, ապահովվում են արժեթղթերի առուվաճառքի հանդիպակաց առաջարկությունները, կամ իրականացվում է արժեթղթերի առևտրի կազմակերպման սովորական գործունեությունը: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները,

18) **«Աշխատանքային օր»՝** ցանկացած օրացուցային օր, բացի ՀՀ օրենսդրությամբ և Արտասահմանյան բրոքերի երկրի օրենքներով սահմանված հանգստյան և տոնական օրերի, ՀՀ Կառավարության և Արտասահմանյան բրոքերի երկրի Կառավարության որոշմամբ աշխատանքային օրերին տեղափոխված հանգստյան օրերի, որոնց ընթացքում Բրոքերն իրականացնում է Հաճախորդների սպասարկում,

19) **«Դեպո հաշիվ»՝** դեպոզիտարիայի կողմից վարվող արժեթղթերի անհատական հաշվի հաշվառում, որն իրենից ներկայացնում է դեպոզիտարի կողմից արժեթղթերի սեփականատիրոջ հաշվին հաշվառվող էլեկտրոնային գրառումների, այդ արժեթղթերի նկատմամբ նրա իրավունքների և սահմանափակումների, արժեթղթերի հաշվառման ընդունման ժամկետների և այդ մասին գրառումների կատարման և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկությունների ամբողջություն,

20) **«Առևտրային համակարգ (ԱՀ)»՝** կազմակերպված շուկա կամ արժեթղթերի առուվաճառքի կազմակերպման համար ներգրավված այլ միջոցներ, կազմակերպություն կամ համակարգ, որը որոշակի կանոնների համաձայն ապահովում է արժեթղթերի առևտուր, ինչի արդյունքում նաև հնարավորություն և միջոցներ են տրամադրվում փոխադարձ պարտավորություններով հաշվարկների, քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման համար,

21) **«Համաձայնագիր»՝** Հաճախորդի և Բանկի միջև կնքված համաձայնագիր Արտասահմանյան բրոքերի կողմից սպասարկվող առևտրային համակարգի դիտման և գործարք կատարելու հասանելիություն տրամադրելու մասին, որի անբաժանելի մասն է կազմում սույն Ընթացակարգը: Սույն Ընթացակարգում «Համաձայնագիր» հասկացությունը իր մեջ չի ներառում սույն փաստաթուղթը,

22) **«Հաճախորդի հաշիվ»՝** բրոքերային հաշվի, պահառության պայմանագրում նշված դեպո հաշվի և ենթահաշվի ամբողջականություն,

23) **«Միջոցներ»՝** Հաճախորդի հանձնարարականների կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով Բանկին տրամադրված կամ Հաճախորդի հանձնարարականների կատարման արդյունքում ստացած դրամական միջոցներ (ցանկացած արժույթով) և արժեթղթեր,

24) **«ենթահաշիվ»՝** Բանկի Միասնական բրոքերային հաշվի առանձնացված բաժին՝ նախատեսված Հաճախորդի դրամական միջոցների և արժեթղթերի հաշվառման համար,

25) **«FATCA»** (Foreign Account Tax Compliance Act)՝ «Արտասահմանյան հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենք, սահմանված ԱՄՆ Հարկային օրենսգրքի 4-րդ Գլխով և ԱՄՆ Հարկային օրենսգրքի 4-րդ Գլխի պահանջների կատարման ԱՄՆ Գանձապետարանի հրահանգով (U.S. Treasury Regulations),

26) **«T+1/T+2»՝** հաշվարկների ժամանակացույց, որտեղ T-ն «today» անգլերեն բառի հապավումն է: «1/2» թվանշանը նշանակում է, որ փաստացի հաշվարկները գործարքով կատարվում են 1-2 օրում գործարքի կնքումից հետո:

8. Սույն Ընթացակարգում կիրառվող մնացած հասկացություններն ունեն Օրենքով և դրա հիման վրա հաստատված այլ նորմատիվ ակտերով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Բանկը բացում է Բրոքերային հաշիվ, Բանկում Հաճախորդի դրամական հաշվի և Դեպո հաշվի առկայության դեպքում, համաձայն հաստատված ներքին իրավական ակտերի:

10. Բանկը բացում է Բրոքերային հաշիվ, Բանկի և Հաճախորդի միջև բրոքերային պայմանագիր կնքելու, ինչպես նաև պայմանագրով և տվյալ Ընթացակարգով պահանջվող փաստաթղթերի ամբողջ փաթեթը ներկայացնելու դեպքում: Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային տարբերակով: Եթե արդեն ներկայացվել են դրամական հաշվի և Դեպո հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթերը, ապա դրանք կրկին ներկայացնել չի պահանջվում: Ենթահաշիվ բացելու համար Հաճախորդը պետք է ներկայացնի ստորագրված Համաձայնագիրը և բրոքերային սպասարկման շրջանակներում Արտասահմանյան բրոքերի կողմից պահանջվող փաստաթղթերը:

11. Բանկի մասնաճյուղի աշխատակիցը բացում է բանկային հաշիվներ ՀՀ դրամով և Հաճախորդի կողմից նախատեսվող գործարքի արժույթով, կամ ստուգում է Հաճախորդի տվյալները և նրա կողմից լրացված պահանջվող հարցաթերթիկները և, նախկինում բացված հաշիվների առկայության դեպքում, կնքում պահառության և բրոքերային սպասարկման պայմանագրեր, համաձայնագիր Արտասահմանյան բրոքերի կողմից սպասարկվող առևտրային համակարգի դիտման և գործարք կատարելու հասանելիություն տրամադրելու մասին, Հաճախորդին փոխանցում փաստաթղթեր FATCA և CRS մասով լրացման համար (ինքնահավաստագրման ձև CRS նպատակների համար, ինչպես նաև W-8BEN FATCA նպատակների համար):

12. Հաճախորդի կողմից ստորագրված փաստաթղթերի ամբողջ փաթեթը Բանկի մասնաճյուղի աշխատակիցը փոխանցում է Պատասխանատու աշխատակցին ստորագրելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

13. Բանկի Պատասխանատու աշխատակիցն Արտասահմանյան բրոքերին է ուղարկում Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ «իսկականի հետ ճիշտ է» նշմամբ, բրոքերային սպասարկման պայմանագրի պատճենը, FATCA և CRS մասով փաստաթղթերի բնօրինակները, ինչպես նաև այլ փաստաթղթեր՝ Արտասահմանյան բրոքերից հարցում ստանալու դեպքում:

14. Բանկի Պատասխանատու աշխատակիցը Հաճախորդի հաշիվը բացելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում գեներացնում է ժամանակավոր մուտքանուն և գաղտնաբառ Quik ԾԱ և/կամ Հեռախոսային հավելված մուտք տրամադրելու համար:

15. Հաճախորդի հաշիվը բացելուց հետո, Բանկի Պատասխանատու աշխատակիցը Համաձայնագրում նշված Հաճախորդի էլեկտրոնային հասցեին ուղարկում է ծանուցում հաշիվներ բացելու մասին, հղում Quik ԾԱ տեղադրման համար, Quik ԾԱ և/կամ Հեռախոսային հավելված մուտքի ժամանակավոր մուտքանուն և գաղտնաբառ:

ԳԼՈՒԽ 4
ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

16. Սույն Ընթացակարգի համաձայն Բանկը մպարիջնորդավճարի դիմաց Հաճախորդներին տրամադրում է արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակցի բրոքերային ծառայություններ, Quik ԾԱ և Արտասահմանյան բրոքերի Հեռախոսային հավելվածի միջոցով արժեթղթերի առուվաճառքի գործարքներ ինքնուրույն կնքելու և Բանկին Հայտ ուղարկելու միջոցով գործարքներ կնքելու համար՝ պահպանելով հետևյալը.

1) Հաճախորդների կողմից արժեթղթերով գործարքների կատարման համար Բանկին ներկայացված Հայտերի ընդունման և փոխանցման կարգը և պայմանները, որոնք կարգավորվում են կայքում տեղադրված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կողմից արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով,

2) Արտասահմանյան բրոքերին անձնական տվյալների հրապարակման համաձայնության տրամադրում, համաձայն ստորագրված Համաձայնագրի,

3) Վերջնահաշվարկի կատարման, Բանկի և Արտասահմանյան բրոքերի հանդեպ Հաճախորդի պարտավորությունների մարման իրականացման համար Հաճախորդի Հաշվին բավարար Միջոցների ապահովում:

17. Բանկը Հաճախորդի հետ կնքված Համաձայնագրի հիման վրա վերջինիս համար բացում է Ենթահաշիվ և իրականացնում Հաճախորդի գրանցում Արտասահմանյան բրոքերի առևտրային հարթակներում, ներառյալ գրանցումը ԱՀ-ում՝ ԱՀ կանոններին համապատասխան: Հաճախորդների գրանցումը ԱՀ-ում իրականացվում է միայն Հաճախորդի կողմից համապատասխան գումարը փոխանցելուց հետո:

18. Բանկը կարող է չընդունել Հաճախորդի գործարքների կնքման Հայտն այն օրացուցային օրվա ընթացքում, որը Համաձայնագրի պայմաններին համապատասխան Արտասահմանյան բրոքերի օրենսդրությամբ պաշտոնապես սահմանված է որպես հանգստյան կամ ոչ աշխատանքային տոնական/հիշատակի օր (այդ թվում Արտասահմանյան բրոքերի օրենսդրությանը համապատասխան պաշտոնապես աշխատանքային օր փոխանցված հանգստյան օր), և միաժամանակ հանդիսանում է օր, որի ընթացքում անցկացվում են սակարկություններ համապատասխան ԱՀ-ում: Այն դեպքում, եթե Հաճախորդը կատարում է գործարքը Արտասահմանյան բրոքերի համար աշխատանքային, բայց Բանկի համար ոչ աշխատանքային հանդիսացող օրվա ընթացքում, ապա այդ դեպքում սակագները կգանձվեն և Հաճախորդը կստանա գործարքի կատարման մասին հաշվետվություն Բանկի հաջորդ աշխատանքային օրը:

19. Հաճախորդը, Ենթահաշվից դրամական միջոցներ հետկաչի համար, Բանկին պետք է ուղարկի համապատասխան Հայտ (Հավելված 1):

20. Դրամական միջոցների հաշվեգրումը Ենթահաշվին իրականացվում է բացառապես անկանխիկ փոխանցմամբ: Անկանխիկ կարգով Հաճախորդի փոխանցված դրամական միջոցները Բանկն ուղարկում է ԱԿԾ-ում սակարկություններին մասնակցելու համար:

21. Բրոքերային գործարք կնքելու համար Հաճախորդն իրականացնում է միջոցների դեպոնացում՝ Բանկում բացված Բրոքերային հաշվին համապատասխան դրամական միջոցների

փոխանցման ճանապարհով (համապատասխան դրամական միջոցների փոխանցումը Հաճախորդը կարող է իրականացնել Internet Banking (Mobile Banking) կամ Բանկի մասնաճյուղի վճարային հանձնարարագրի միջոցով):

22. Հաճախորդը դրամական միջոցների հետկանչի համար.

1) Հայտ է ներկայացնում Բանկի Պատասխանատու աշխատակցին՝ ուղարկելով ստորագրված Հայտի լուսապատճենը (Հավելված 1) Բանկի Պատասխանատու աշխատակցի կողմից Հաճախորդին տրամադրված Համաձայնագրում նշված համապատասխան էլեկտրոնային հասցեին: Հաճախորդը պարտավորվում է տրամադրել Բանկին Հայտի բնօրինակը մեկ աշխատանքային օրվա ընթացքում,

2) Հայտ է ներկայացնում Բանկի մասնաճյուղի աշխատակցին, որն իր հերթին ուղարկում է ստորագրված հանձնարարության լուսապատճենը Պատասխանատու աշխատակցին հայտը ստանալու պահին:

ԳԼՈՒԽ 5
ԱԳԱՈՒԽ ԿՈՂՄԻՑ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

23. ԱԳԱՈՒԽ աշխատակիցը յուրաքանչյուր Հաճախորդի համար բացում է առանձնացված բրոքերային հաշիվներ, համաձայն Բանկի Պատասխանատու աշխատակցի կողմից ուղարկված արժեթղթերի շուկայում բրոքերային սպասարկման գծով Հաճախորդի հետ կնքված փաստաթղթերի փաթեթի:

24. Հաճախորդը կարող է հայտնել Բանկին (Համաձայնագրում նշված հեռախոսահամարով կամ էլ.հասցեով) Բրոքերային հաշվին միջոցների ապահովման մասին, հակառակ դեպքում ԱԳԱՈՒԽ աշխատակիցը գործառնական օրվա ընթացքում երկու ժամը մեկ ստուգում է միջոցների առկայությունը (առնվազն 2 անգամ մեկ գործառնական օրվա ընթացքում՝ ժամը 11:00-ին և 16:00-ին):

25. Նոր միջոցների ի հայտ գալու դեպքում, ԱԳԱՈՒԽ աշխատակիցն իրականացնում է համապատասխան գումարի փոխանցում Բանկի համար հատուկ բացված ակտիվ տարանցիկ հաշվից Արտասահմանյան բրոքերի անվանատիրոջ հաշվին:

26. Հաճախորդի կողմից արժեթղթերի կամ այլ ֆինանսական գործիքների առուվաճառքի դեպքում, ԱԳԱՈՒԽ աշխատակիցը գործառնական օրվա վերջում համեմատում է գործարքները Արտասահմանյան բրոքերի հաշվետվությունների հետ, և կատարված գործարքների չափով

կրեդիտագրում կամ դեբետագրում Բրոքերային հաշիվները հատուկ ակտիվ տարանցիկ հաշվի հետ:

27. ԱԳԱՈՒԽ աշխատակիցը մինչև գործարքի կատարման գործառնական օրվա վերջ Հաճախորդի Բրոքերային հաշվից գանձում է միջնորդավճար Հաճախորդի կողմից կատարված գործարքների միջնորդավճարների (Բանկի և Արտասահմանյան բրոքերի միջնորդավճարների) չափով:

28. Արտասահմանյան բրոքերի միջնորդավճարների չափով ԱԳԱՈՒԽ աշխատակիցը, մինչև Հաճախորդի կողմից գործարքի կատարման գործառնական օրվա ավարտը, հատուկ ակտիվ տարանցիկ հաշվին ձևակերպում է ծախս, իսկ Բանկի միջնորդավճարների չափով փոխանցում է կատարում հատուկ ակտիվ տարանցիկ հաշվից սպասվող միջնորդավճարների համար բացված այլ ակտիվ տարանցիկ հաշվին:

29. ԱԳԱՈՒԽ աշխատակիցը շահութաբաժինների, տոկոսային և այլ եկամուտների գումարները, ինչպես նաև Հաճախորդի կողմից ձեռքբերված արժեթղթերի մարման գումարները Արտասահմանյան բրոքերի մոտ բացված անվանատիրոջ հաշվին փոխանցելուց հետո, մինչև գործառնական օրվա ավարտը տվյալ գումարը հատուկ ակտիվ հաշվից փոխանցում է Հաճախորդի Բրոքերային հաշվին:

30. Այն դեպքում, եթե Հաճախորդը ցանկանում է միջոցներ փոխանցել իր Բրոքերային հաշվից բանկային հաշվին, նա Բանկի Պատասխանատու աշխատակցի համապատասխան լիազորված էլեկտրոնային հասցեին ուղարկում է դրամական միջոցների փոխանցման ստորագրված Հայտի լուսապատճենը (Հավելված 1): Հաճախորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում պարտավորվում է տրամադրել Բանկին Հայտի բնօրինակը: Դրանից հետո ԱԳԱՈՒԽ աշխատակիցը հետ է կանչում միջոցները Արտասահմանյան բրոքերի անվանական հաշվից, որոնք ԱԳԱՈՒԽ աշխատակիցը, Բանկի հաշվին մուտքագրելուց հետո, փոխանցում է Հաճախորդի Բրոքերային հաշվից նրա բանկային հաշվին:

ԳԼՈՒԽ 6
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

31. Հաճախորդը կարող է իրականացնել բորսայական և արտաբորսայական գործարքներ:

32. Բորսայական գործարքներն իրականացվում են Հաճախորդի կողմից Quik ԾԱ կամ Հեռախոսային հավելվածի միջոցով գործարքի անմիջապես կնքմամբ՝ հետևյալ կարգով.

1) Հաշվին միջոցների դեպոնացում,

2) Հաճախորդի կողմից Quik ԾԱ կամ Հեռախոսային հավելվածի միջոցով Հայտի տեղադրում (առուվաճառք),

3) Գործարքի կնքում T+2 առաքմամբ: Գործարքը կնքելուց հետո Արտասահմանյան բրոքերը օրական կտրվածքով ավտոմատ կարգով գանձում է ընդհանուր միջնորդավճարը (սեփական միջնորդավճարը և Բանկի միջնորդավճարը) Հաճախորդի Ենթահաշվից:

33. Արտաբորսայական գործարքներն իրականացվում են Բանկին Հայտ տրամադրելու միջոցով հետևյալ կարգով.

1) Բրոքերային հաշվին միջոցների դեպոնացում,

2) Հայտի ներկայացում Բանկի Պատասխանատու աշխատակցին՝ Բանկի մասնաճյուղում Հայտը լրացնելու, կամ ստորագրված Հայտի լուսապատճենը Բանկի լիազորված հասցեներին էլեկտրոնային տարբերակով ուղարկելու միջոցով՝ Հայտի բնօրինակը ներկայացնելով հաջորդ աշխատանքային օրը կամ ձայնագրվող հեռախոսի միջոցով,

3) Բանկի Պատասխանատու աշխատակիցը ներկայացնում է Հաճախորդի Հայտը Արտասահմանյան բրոքերին,

4) Գործարքի կնքում T+2 առաքմամբ: Գործարքի կնքումից հետո Արտասահմանյան բրոքերը օրական կտրվածքով ավտոմատ կարգով գանձում է իր միջնորդավճարը Հաճախորդի Ենթահաշվից: Բանկը գանձում է միջնորդավճար Հաճախորդի հաշվից՝ գործարքի կնքման հաջորդ օրը (T+1):

34. Գործարքը կնքելուց հետո Արտասահմանյան բրոքերը Բանկին ուղարկում է գործարքի կնքման մասին ընդհանուր հաշվետվություն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ օրը (T+1):

35. Հաճախորդի կողմից բրոքերային գործարքը կատարելուց հետո Բանկը պետք է անմիջապես, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ օրը, Հաճախորդին ներկայացնի հաշվետվություն գործարքի կատարման վերաբերյալ (համաձայն «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ»-ի 10 և 11 հավելվածների):

36. ԱԳԱՈՒԽ ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրվա ավարտին Հաճախորդին ուղարկում է հաշվետվություն դեպո/դրամական միջոցների շարժի մասին (պահառուական հաշվետվություն) (համաձայն Պահառության գործունեության սպասարկման կանոնների Հավելվածի):

ԳԼՈՒԽ 7
ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ

37. Սույն Ընթացակարգի համաձայն տրամադրված ծառայությունների դիմաց Բանկը Հաճախորդից գանձում է միջնորդավճար, համաձայն Բանկի Գլխավոր տնօրենի-Տնօրինության նախագահի հրամանով հաստատված և Բանկի կայքում տեղադրված բրոքերային սպասարկման սակագների (Սակագներ):

38. Բանկը կարող է միակողմանի կարգով փոփոխել սահմանված Սակագները, Հաճախորդին առնվազն մեկ ամիս առաջ ծանուցման պայմանով՝ Բանկի պաշտոնական կայքում փոփոխության մասին հայտարարություն տեղադրելու միջոցով: Ընդ որում, Հաճախորդը համարվում է ծանուցված Բանկի պաշտոնական կայքում համապատասխան փոփոխությունը տեղադրելուց հետո:

39. Հաճախորդը Բանկի կողմից Հայտը կատարելու ընթացքում պարտավորվում է նաև վճարել բոլոր չնախատեսված գործառնական ծախսերը, կապված Արտասահմանյան բրոքերի կողմից գործարքի կնքման համար երրորդ անձանց ներգրավման և այլ ԱՀ-ների օգտագործման հետ: Նման ծախսերը ներառված չեն Բանկի կողմից սահմանված Սակագներում: Նման գործարքներն իրականացնելուց առաջ Բանկը պարտավորվում է ծանուցել Հաճախորդին հնարավոր ծախսերի մասին:

40. Գործարքը կնքելուց հետո միջնորդավճարը, չնախատեսված գործառնական ծախսերի գումարները, տոկոսները, տույժերը և տուգանքները, համաձայն սույն Ընթացակարգի և Համաձայնագրի, ինչպես նաև Հաճախորդի՝ Բանկի հանդեպ ունեցած բոլոր այլ պարտավորությունների գումարները անակցեպտ կերպով գանձվում են Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված դրամական միջոցներից: Հաճախորդը պարտավոր է ապահովել անհրաժեշտ ծավալով միջոցների առկայությունը նշված դրամական հաշիվներին:

41. Հանձնարարությունը կատարելուց կամ փոխանցելուց հետո Բանկը գանձում է համապատասխան գումարները Հաճախորդի ՀՀ դրամով հաշիվներից, իսկ այդ հաշիվներին բավարար միջոցների բացակայության դեպքում գումարը գանձվում է արտարժույթով բացված հաշիվներից՝ Բանկում տվյալ պահին գործող փոխարժեքով:

ԳԼՈՒԽ 8
ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

42. Սույն Ընթացակարգում փոփոխությունները և լրացումներն իրականացվում են Բանկի կողմից միակողմանի կարգով:

43. Հաճախորդի ծանուցումը սույն Ընթացակարգում կատարված փոփոխությունների (լրացումների) մասին իրականացվում է Բանկի ինտերնետային կայքում նշված փոփոխությունները տեղադրելու միջոցով, ընդ որում պարտադիր նշվում է նաև կայքում տվյալ փոփոխության տեղադրման ամսաթիվը:

44. Սույն Ընթացակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները, որոնք կատարվում են Բանկի կողմից սեփական նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխման հետ, ուժի մեջ են մտնում և դառնում պարտադիր Հաճախորդի համար կայքում տեղադրելուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

45. Սույն Ընթացակարգում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, ինչպես նաև առևտրի կազմակերպիչների կանոնների և կարգերի փոփոխման հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

46. Բրոքերային սպասարկման պայմանագրերի լուծման/դադարեցման դեպքում, Հաճախորդի ակտիվները փոխանցվում են՝ Բանկի ներքին իրավական ակտերին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Այն դեպքում, եթե պայմանագրերի լուծման/դադարեցման պահին Հաճախորդի Հաշվին/դրամական հաշվին կմնան նրան պատկանող ֆինանսական գործիքներ և/կամ գումարներ, Հաճախորդը պարտավոր է Բանկին հանձնարարական տրամադրել նոր բրոքերի/բանկի հաշվին դրանք փոխանցելու համար՝ պայմանագրերի լուծման/դադարեցման մասին ծանուցումը ստանալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Բանկը Հաճախորդին վերադարձման ենթակա գումարներից պահում է պայմանագրերով նախատեսված Հաճախորդի բոլոր պարտավորությունների գումարները: Գումարների վերադարձման կամ գումարների/ֆինանսական գործիքների փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Հաճախորդի հաշվին: Պայմանագրերի լուծման/դադարեցման ամսաթվի դրությամբ Հաճախորդը պարտավոր է իրականացնել պայմանագրերով նախատեսված բոլոր ֆինանսական հաշվարկները:

ԳԼՈՒԽ 9
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Սույն Ընթացակարգն ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով:

48. Սույն Ընթացակարգը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով: Հայերեն և ռուսերեն տարբերակների միջև հակասությունների առկայության դեպքում, գործում են հայերեն տարբերակի դրույթները:

VTB

Приложение № 1/ Հավելված 1

Դրամական միջոցների ապադեպոնացման հանձնարարական
Поручение о списании денежных средств

--/--/-----

Դրամական միջոցների ապադեպոնացնող Лицо, списывающее денежные средства	
Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը) Наименование клиента (фамилия, имя)	
Հաճախորդի բրոքերային համաձայնագրի համարը Номер брокерского соглашения клиента	

Տեղեկություններ հաճախորդի ապադեպոնացվող հաշվի վերաբերյալ
Сведения о счете, подлежащем списанию

Կազմակերպության անվանումը, որտեղ բացված է դրամական հաշիվը Наименование организации, в котором открыт денежный счет	Հաշվի համարի վավերապայմանները Реквизиты номера счета	Արժույթը Валюта	Գումարը Сумма	Հատուկ ցուցումներ Особые указания

Տեղեկություններ ստացողի վերաբերյալ
Сведения о получателе

Ստացողի անվանումը (անուն, ազգանունը) Наименование получателя (фамилия, имя)	
Ստացողի հաշվեհամարի վավերապայմանները և փոխանցման համար այլ անհրաժեշտ տեղեկություններ Реквизиты номера счета получателя и другие сведения, необходимые для перевода	

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)
Наименование клиента (фамилия, имя)

Ստորագրություն/Подпись

ԲԱՆԿԻ ՆՇՈՒՄՆԵՐ
ОТМЕТКИ БАНКА

Հանձնարարականի ընդունման ամսաթիվ
Дата принятия поручения _____ день/месяц/год

Հանձնարարական ընդունող
Подпись лица, принимающего поручение